Հայտարարություն ոստիկանների կողմից «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության թղթակից Անի Նահապետյանին բերման ենթարկելու, հեռախոսում առկա նյութերը ջնջելու և նրա նկատմամբ քրեական գործ հարուցելու կապակցությամբ

2022, Փետրվարի 24, Երևան

2022թ. փետրվարի 22-ին Ադրբեջանի մեջլիսի պատգամավորների՝ Երևան այցելելու դեմ բողոքի ակցիա իրականացնող ցուցարարների հետ մայրաքաղաքի Հանրապետության հրապարակից ոստիկանները բերման են ենթարկել նաև «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության թղթակից Անի Նահապետյանին: Վերջինս աշխատանքային պարտականություններն է կատարելիս եղել և միջադեպի պահին ցույց է տվել լրագրողական վկայականը: Ավելի ուշ՝ արդեն ոստիկանության բաժնում, իրավապահներն Անի Նահապետյանի ձեռքից վերցրել են հեռախոսը և ջնջել այն կադրերը, որոնք նա նկարահանել էր շենքի ներսում: Ի թիվս այլ քաղաքացիների, լրագրողի նկատմամբ նույնպես քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի (խուլիգանություն) 1-ին մասի հատկանիշներով: Ըստ իրավապահների՝ Անի Նահապետյանը հայհոյանքներ է հնչեցրել իշխանությունների հասցեին, ինչը, սակայն, լրագրողը հերքել է և, իր հերթին, հաղորդում է ներկայացրել հանցագործության մասին:

Թեև ոստիկանությունը միջադեպի առնչությամբ պարզաբանում է հրապարակել՝ պնդելով, որ «որևէ մեկը չի ներկայացել որպես լրատվամիջոցի ներկայացուցիչ և չի ներկայացրել համապատասխան փաստաթուղթ», մենք այդ փաստարկը հիմնազուրկ և ոչ համոզիչ ենք համարում, քանի որ անհերքելի ապացույցներ կան առ այն, որ Անի Նահապետյանը և՛ բերման ենթարկվելիս, և՛ ոստիկանության բաժնում տեղեկացրել է, որ լրագրող է: Այդուհանդերձ, չորս ժամից ավելի բաժնում պահելուց հետո միայն նրան ազատ են արձակել:

Մենք՝ ներքոստորագրյալ կազմակերպություններս, խստորեն դատապարտում ենք լրագրողի նկատմամբ կիրառված ոչ իրավաչափ գործողությունները, այդ թվում՝ ապօրինի բերման ենթարկելը և մասնագիտական գործունեության խոչընդոտումը:

Այս առնչությամբ ՀՀ ոստիկանությունից պահանջում ենք.

- անհապաղ կարճել Անի Նահապետյանի դեմ հարուցված քրեական գործը,
- ծառայողական քննություն նշանակել և պատասխանատվության ենթարկել իրենց լիազորությունները չարաշահած ոստիկաններին,
- միջոցներ ձեռնարկել՝ ապագայում լրագրողների նկատմամբ նման վերաբերմունքն ու գործողությունները բացառելու համար:

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ՄԵԴԻԱ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ

ԳՈՐԻՍԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

«ՖԵՄԻԴԱ» ՀԿ